ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 4 ՕԳՈՍՏՈՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Վերի պատկերը ոչ տեղական ազգային կացութենէն ներշնչուած է հոս կը գտնենք առանց մէկնութեան։ Մինչև մէկ շաբաթ ո՛վ որ այդ պատկերին տիրոջական մեկնութիւնը կարենայ տալ, իբրև նուէր պիտի ընդունի 20 թիւ «Ազատ Խօսք», Բ. շրջանէն սկսեալ։

20,000 ՄԱՐՍԱԽ ԾՈՎԵՐՈՒՆ ՏԱԿ

Հոն, ծովերուն տակ, այնքան մութ կ'ըլլէ որքան հոս, վերը, մեր ազգային գործերուն մէջ...։

Օրին մէկը, քանի մը հոգի միացան և հոն՝ ծովին տակը՝ բնակող մարդոց վրայ լոյս-բերող գործիք մը շինեցին։ Իրենցմէ առաջ, ուրիշներ արդէն թուղթէ բեմի մը վրայ ելեր կանգներ էին՝ բարձրաշխափոր ապացուցելով թէ ոչ միայն իրենք, հոնկէ, դուրսի լոյսը պայծառօրէն կը տեսնային, այլ նաև՝ թէ ամէն անոնք որ աչքերնին կապած երեք անգամ այդ բեմին շուրջը դառնան, անպատճառ լոյսը պիտի նշմարեն։

Արդ, պատահեցաւ որ լոյս բերող գործիքին և լոյսը ցուցնող բեմին գործաւորները օր մը, մութին մէջ, իրարու զարնուեցան...։ Ի ըն-կըզման, գաղափարաց բաղխում նկատուեցաւ ասիկա։— Աւելի դիւրի՞ն էր լոյսը ծովերուն տակ բերել, թէ ծովերուն տակէն դէպի լոյսը ելլալ, կոխելով պարզապէս բեմի մը վրայ կամ դառնալով անոր շուրջը.— Այդ էր խնդիրը, ինչպէս ըսած էր ժամանակին... անամիտ արաբ հեղինակ մը՝ Շէյխ Սպիր-Թօ...։

Ցաւալ, սակայն, բեմին գործաւորները այս կէտը կորսնցուցին աչքէ.— այնքա՜ն մութ կ'ըլլէ՝ երբ մարդ կ'իջնէ նոյնիսկ մէկ բալսեղ ծովերուն տակ — կ'սկսան միւսներուն հանդեր-

ճանքին, Թիլքի-քիւրքին եւ քէչէ-քիւլահին վրայ տիղմ նետել՝ զանոնք, այսպէս, ա՛լ աւելի սեւցընել, մթնցնել ուզելով, յանուն սկզբունքի…։

Նախ, մեւաները „ի զո՜ւր" կամ „ի ջո՜ւր" մրմնջեցին եւ լուր կամ ջուր անգամ ունենալ չուզեցին իրենց դէմ գաղտնաբար հերատուող ժողովրդային այս յուզումի ջրհանէն։ Վերջէն, սակայն, երբ տեսան որ այդ միջոցին քթուղթէ բեմը սկսած էր քիչ քիչ մեծնալ լայնքին ու երկայնքին (առանց սակայն բարձրանալու), երբ մանաւանդ իրենց բեմը միասին բերելով, քանի մը ընդդիմամարտ գործաւորներ տնկուվ եկան լոյս-բերող գործիքին դէմը եւ թշնամական ձայներ հանեցին ու շարժումներ ըրին,– այն ատեն Թիլքի-քիւրքը, քէչէ-քիւլահն եւ իրենց ուրիշ ընկերները մոռցան այլեւս իրենց խմած գինիին մէջ ջուր խառնել եւ տուին բեմին վրայ յարձակման նշանը (որ Մալումեանը չէր)։

— Դիւցազնական կռիւ մը եղաւ ասիկա, գըլուխներ գլուխներու զարնուեցան եւ ոտքեր՝ ոտքերու, որմէ ամէնէն շատ տուժեցին ճաղատները եւ կոշտ ունեցողները… Խուլ հայհոյանքներ թռան, որոնց ի լուր ձուկերուն միսը փուշ-փուշ եղաւ եւ ժանիքներ ցցուեցան՝ որոնց ի տես շանաձուկերը իրենցինները ետ քաշեցին։ Ներան մը կար մանաւանդ, կա՛փ մը այնքա՞ն

զարհուրելի և կասկարայուած այնչա՜փ երկար ու սուր ատամներով որ կը թուէր ըլլա՜լ ածխակալը դժոխոց... Վերջապէս. երարանցումը. վայնասունն ու մթութիւնը գեհենային էր և չգիտցուեր այս վիճակը որքա՞ն պիտի տևէր դեռ՞ երբ բնութեան չարաճճի մէկ կատակը կամ նախախնամութեան անհասանելի մէկ հրամանը պայթեցուց յանկարծ մին այն ընդծովեայ հրաբուխներէն որոնցմէ մէկէնիմէկ ովկիանոսներու մէջտեղը պզտիկ կղզիներ կը ծընին...,

Եւ ահա՛ քսան հազար սարսափ ջուրերուն երեսը ելան... և անմիջապէս սկսան շարունակել իրենց կռիւը, մէկ կողմին կուսակիցները պնդելով թէ ի շնորհս իրենց բնմին հասած էին լոյսին, մինչ միւս կողմը, իր լոյս-բերող գործիքին խոհականութեանը կը վերագրէր Աստուծոյ այս շնորհը...

ԿԻԿՕ

—

ԽՕՍՔԻ ՇԱՐՈՑ

«Բանալի գաղտնեացուէն.-Եւ ահա Մարէշալը իր թիկնաթոռին վրայ բարձրավիզ ելաւ կեցաւ և ձեռքով նշան մը ընելուն, լուսին հանըմը կէս մը եաշմախը երեսը ծածկեց. նոյնպէս աստղերը իրենց լոյսերը մէյմէկ քիչ պզտիկցուցին. Ալիքները կեցան, հովերը իջան, լեռները խոնարհեցան և ամէնուն աչքերը՝ հրամանի

մը սպասողներու պէս մարէշալին յառաջման, և ականջնին տնկեցին լսելու համար։

Մարէշալ.- Սիրելի ընկերներ.

Գիտէք անշուշտ որ այսօր ութը որ է որ մենք մեր Որ Էն պապային կը սպասաւորենք գիշեր ցերեկ, առանց հանգիստ առնելու և անոր ամէն մէկ հաճոյքին կը խոնարհինք իբրև ամէնուն տէրը, սակայն մեծ վիշտ մը եղած է իմ սրտիս որ երբեք իր գործառնութեանցը մէջ խորհրդակցութեան չի հրաւիրեր. ի հարկէ ձեր մէջէն շատերը թերևս պիտի զարմանան և պիտի ապշին թէ ես ի՞նչ իրաւունքով կամ զօրութիւնով այսպիսի պահանջք մը կընեմ. անոր համար այստեղ ձեր առջևը մէկ քանի օրինակներ կը դնեմ ուրկէ դուք ալ պիտի համոզուիք որ գոնէ ես և իմ օգնական մէկ երկու ընկերներս իրաւունք ունինք։

Հիմա ընկերներ, ամէնքդ ալ առանց բացառութեան, գլուխնիդ դէպի հարաւային կողմէն ծովը երկնցուցէք և պիտի տեսնէք։

Ասոր վրայ ամէնքն ալ մեծ ու պզտիկ, էրիկ մարդ կնիկ մարդ, դէպի այն կողմը խուժեցին և փրարու վրայ ելլելով դէպի ծովը կը նայէին տեսնելու։ Այն ատեն մարէշալը ձեռքը դէպի ծովը ուղղելով հրաման ըրաւ.

Ելի՛ր...

Եւ ահա ծովին մէջէն մեր աշխարհին մեծութիւնովը պատրաստ աշխարհք մը դուրս ելաւ ցցուեցաւ....

Նոյն միջոցին ժէնէրալ պարոն Թ. Շ. Կ. Խարեց, առաջ անցաւ և խնդրեց որ այս Նոր աշխարհին կընքահայր ըլլայ. և խնդիրը ընդունուեցաւ բերանը բացաւ և երեք անգամ կրկնեց. Մ ր ա տ է անուն նորա.

Մարէշալը կրկնեց «եղիցի» ու ներկաները ամենաբուռն ծափահարութիւնով իրենց հաւանութիւնը յայտնեցին, միևնոյն ատեն արմանքի զարմանքի մէջ մնալով թէ ի՞նչպէս Որ էն պապային բրածը Մարէշալն ալ կ՚ընէ կոր. ոմանք կը կարծէին որ արհեստը սորված է։ ոմանք կը պնդէին թէ Որ էնին չանթայէն զօրութիւն գողցած է. մէկ քանիներն ալ կը զոռէին. բր քանի որ մարէշալը միշտ Որ էնին քովը կը գտնուէր, խորամանկութեամբ արուեստին «բիւֆեէրի»ն հասկցած է. իսկ ուրիշներ ալ գրաւ դնել կուզէին կարծիք յայտնելով որ՝ թէն մարէշալը «եղիցի»ն կը բնայ սորված ըլլալ բայց «փչելը» չի կրնար։ Մարէշալը որ առաջին փորձէն անմիջապէս եռքը հետազոտող աչքով մը չորս դին կը դիտէր տպաւորութիւնը հասկընալու համար, կռահեց որ բան մը կը դառնայ իրեն նկատմամբ. այն ատեն դարձաւ անոնց ու ըսաւ.

- Եթէ կը գտնուին ձեր մէջ այնպիսիներ որոնք չբաւականանալով այս ըրածէս ուրիշ զօրութիւններ ալ կուզեն ցոյց ցուցնեմ, թող առաջարկեն և ես պատրաստ եմ կատարելու իրենց խնդիրը։

Պահ մը լռութիւն տիրեց ամէն կողմ։ Քիչ մը ետքը բաղմութեան մէջէն ձայներ լսուեցան.

- Շինած աշխարհդ զարդարէ ամէն բանով, կ՚ըսէին։

Յայնժամ մարէշալը իր սպայակոյտին գլուխը անցնելով առաջ անցան. թեւերնին սոթթեցին, փորերնին տնկեցին։ հաղացին, փոնգտացին և սկսան գործի։

- Պարոններ, ըսաւ մարէշալն։ քանի տեսակ որ պապա Որ էնը վեց օր աշխատեցաւ այս աշխարհս լեցնելու համար, մենք աւելի առաջ երթալով մէկ ժամուան մէջ պիտի կազմակերպենք մեր չինած ու

սանձուած Մրատը, քանի որ խնդիրը «եղիցի»ին վրայ է. ուրեմն՛ օ՛ն ընկերներ, սկսինք «եղիցի»ն, և ահա «եղիցի»ին փաթըրտըն փրթաւ. Ջուր եղիցի, հող եղիցի, քիրէճ խորասան եղիցի. ծառ եղիցի. բոյս եղիցի, բաթլիճան, եղիցի խիյար եղիցի, անանաս, եղիցի պանանէս եղիցի, ձուկ եղիցի, սիւլիւկ եղիցի, սայլանկոզ եղիցի. Էյ ամէնէն առաջ լոյս եղիցի, մութ եղիցի, չարաթ եղիցի, ամիս եղիցի, եղանակներ եղիցի։ Ձայն մը.

- Պ. Մարէշալ եղանակները խնդրենք քառաձայն եղիցի։

Ուրիշ ձայն մը.- Ո՛չ պ. մարէշալ եղանակները օրիանթալ եղիցի։

Մարեշալ.- Ուրեմն խառմախառըն եղիցի. չարունակեցէ՛ք, կենդանիները։- Աւանակ եղիցի, կոկորդիլոս եղիցի, փիրէ թախթապիթի եղիցի։

-Քա եավրում առոր հոտը ո՛վ պիտի քաշէ։

-Եղիցի, էֆէնտիմ, եղիցի. էշէկ առըսի եղիցի. սիվրի սինէկ եղիցի։

- Բայց պարոններ առանք ամէնքն ալ խոթող կըծող հայվաններ են, ի՞նչ պիտի ընենք։

- Ջը խոթող չը կծող հայվաններ ալ եղիցի։

- Է՛յ համկցանք աղբար, պառայ անգիէն գրաչար Չէնօրը, քասային մէջ եղիցի, չարելու գիր չմնաց, քիչ մըն ալ ուրիշ բաներ ըսէ՛։

- Այո, ձայնեցին և ուրիշներ.

- Պարոններ եղիցին ձգեցէք տէ քիչ մըն ալ շունչ փչեցէք, Ադամ մը շինեցէք։

- Չէ՛, Ադամը մինակ չըլլար, Եւան ալ շինեցէք։

Այս որ լսեցին մարէշալը և ընկերները, պահ մը պաղ պաղ իրարու երես նայեցան որովհետև իրաւ է

որ մարէչալը փչկլուն գաղանիքն ալ սորված էր, բայց խնդիրը փչելէն զատ չունչին վրայ էր․ Շունչը երկու տեսակ էր. չունչ կար մարդ էակի համար. չունչ կար հայվան էակի համար և ասոնք զանազանելը չատ դժուար էր, վասնզի երկուքն ալ մէկ բերնէ կ'ելլէին. բայց ի՞նչ ընել քանի որ անգամ մը հրապարակ իջած էին այլևս կարելի չէր ետ մնալ, ուստի մարէչալը իր սպայակոյտին հետ գլուխ գլխի տուաւ խորհրդակցեցաւ և յետոյ հրաման ըրաւ բէնչպէրներուն որ երկու Թէքնէ չամուր բերեն.

Բէնչպէրները գացին և առաջին չաղախի կոյտէն երկու Թէքնէ չամուր առնելով եկան. Իւրաքանչիւր անգամ մէկ մէկ ափուկ չամուր վերցուցին և սկսան զանազան ձևերով մարմիններ չինել ետևով առջևով. վերով վարով, Թէ արականն և Թէ իգականն. ոմանք երկու ոտքով ոմանք երեք և ոմանք չորս և ամէնէն ետքը իրենց չինած մարմիններուն փուֆ ըրին, չունչ փչեցին. Մէյ մըն ալ ի՞նչ տեսնաս, էչեր եկան, որոնք մարդիկներու պէս խելացի էին որովհետև ասոնց սխալմամբ կենդանիի չունչ տրուած էր.

Եւ ահա ասոնց ցեղէն սերեցաւ ապագայ Բաղաամու համբաւաւոր էչը և Միացեալ արհեստագէտ և ճամպայ հայվանները.

Եւ եղան մարդեր, որոնք հայվաններէն ալ աւելի անխելք էին որովհետև սխալմամբ ասոնց ալ հայվանի չունչ տրուած էր. ասոնց ցեղէն սերած են անկէ ետքը և այսօրուան անհամար բազմուԹեամբ մարդիկ որոնք ո՛չ խօսք կը հասկնան և ո՛չ կարգի կուգան այլ պարզապէս երկու ոտքով կամ մարդակերպ հայվաններ են և որոնց համար մարդկային գիտակից ընկերուԹիւնը էչու գլուխ, ոչխարամիտ, բօրենի, կոկոր-

դիլոս և խազ պէյինլի՝ այսինքն սագի ըղեղ ունեցող ածականները և անունները տուաւ։

S. M.

ՇԱՊԻԿԻՆ ԽՆԴԻՐԸ

. . . Խմբագրութիւն «Ազատ Խօսք»ի

Պօղոսեան վարժարանի անկելանոցին հնացականներէն Զէյթունցի ծերուկ պատուելին «Լուսաբեր»ի 144րդ թւոյն մէջ կը փորձէ հերքել «Ազատ Խօսք»ի մէջ հրատարակուած «Շապիկի Խնդիր»ը։

Պօղոսեան վարժարանի մէջ և աշակերտներուն վրայ ո և է պաշտօն չունեցող, բայց այդ յարկին տակ տեղի ունեցող ամէն տեսակ գործերուն մասնակից եղող ծերուկ պատուելին երկրպագութեան և շապիկի խնդիրը՝ փիլիսոփայական անհասկնալի դարձուածքով մը կուզէ տարբեր կաղապարի մը ձևը տալ և «Ազատ Խօսք»ի տեղեկատուն ներկայացնել իբրև «ստայօդ»։

Մտիկ ըրէք հերքմնագիրը, որ սնափառութենէ և խոստովանութենէ ուրիշ բան մը չի պարունակեր իր մէջ։

«Ես կը սիրեմ ազգս և եկեղեցիս. ոչ ոք կրնայ իմ ազատամտութեանս վրայ իշխել. Նաև կը սիրեմ Ս. եկեղեցւոյ երկրպագողները և կ՚ատեմ երկրպագութիւնը ծաղրողները։ Մենք Զէյթունցիքս այսպէս ենք, ներքուստ հաւատքով զինուած և դուրսէն ալ նիւթական զէնքերով պատրաստուած։»

«Ստոյգ աղբիւրէ հաղորդուած ծանրակշիռ իրողութիւնը», որ նուիրական յարկի մը տակ տեղի կու-

նենար, ինչպէ՞ս «ստայոդ» կը նկատուի, երբ «Աղատ Խօսք»ի հրապարակումին հետեւեալ օրը վարժարանին տխրահռչակ տնօրէնին նախագահութեամբ դռնփակ ատեան մը կը կազմուի առաջնորդարանի սրահին մէջ որուն կ'անդամակցին աւագերէց քահանան, Զէյթունցի վարդապետը, Տէր Մաշտոց քահանան և ինքը ծերուկ պատուելին. այդ ատենին կը կանչեն եկեղեցւոյն դպրապետը ոչ թէ կատարուած իրողութեան մը իսկութիւնը ստուգելու, այլ՝ «Աղատ Խօսք»ին ո՞վ խապար տուողը գտնելու և դատափետելու համար...

Այդ ատեանը երկու նիստ ունեցած է. վերջինին մէջ Միքայէլ պէյ Բէիզեան ներկայ գտնուելով խընդիրը մալէշի կապած և ատեանը փակած է։

Ցետոյ մոռցած են փակելու եկեղեցիին դուռները ժողովուրդին աչքին առջև, որ ամէն օր, գրեթէ, կը տեսնէ անպատուաբեր իրողութիւնները իրենց սովորական ընթացքով և մէթոտով, որոնք անվերջանալի յաջորդութիւններով կը կատարուին այդ սրբազան սեմէն ներս։

Միայն չկրցանք ըմբռնել թէ Զէյթունցի ծերուկ պատուելին ի՞նչ թէ տղայոց երկրպագութիւն սորվեցնելուն մէջ կ'ուզէ ցոյց տալ իր ազգասիրութիւնը։ Շատ տարօրինակ և զարմանալի երևոյթ մը պիտի ըլլայ եթէ ամբողջ Զէյթունցիք այդպէս են, և այդ տեսակ իմաստասիրական երկրպագութեան համար աւ մեծ նախատինք մըն է «ի ներքուստ հաւատքով զինուիլ և արտաքուստ ալ նիւթական զէնքով պատրաստուիլ։»

Ոչ միայն կը ծաղրենք այդ տեսակ երկրպագութիւնը, այլ կը քննադատենք բարոյականի բարձր ըսկզբունքով։

ԼԱԽՏ

ԾԻԾԱՂ

- Զաւակս, ե՛լ մի քնանար անօթի, քիչ մը բան կեր տէ պառկէ, ո՞վ գիտէ հայրդ որ թաբաքը գինով եըխըլմիշ եղած մնացած է, տես կէս գիշերը անցաւ։

- Իրա՛ւ մայրիկ, շատ անօթի եմ, բայց դուն չը պիտի՞ ուտես։

- Չէ՛ եավրում տիյօր աս վախիթ մարդուս իշտահը կը մնա՞յ։

- Գա մայրիկ, չե՛ս ցաւիր շատ անգամ այսպէս անօթի պառկելուդ։

- Չէ՛, օրդդի չէ՛, անօթի պառկելէն չեմ վախնար, մինակ կը վախնամ որ իրիկուան կերած հացս փսխել կուտայ տէյի։

- Հայրիկս՝ սա դրօշակ պարզող մարդը ո՞վ է։

- Պարեախտար է օղլում։

- Հայրիկս, պարեախտար ըսածդ կնիկմարդ չըլլա՞ր մի։

- Չէ՛ ծօ էրիկմարդ կըլլայ։

- Հապա ինչո՞ւ մայրիկս դրացիներուն հետ առօրեայ ըրած կռիւներուն առթիւ մայրիկիս պայրախտար կ'ըսեն կոր։

- Զաւա՛կս, ատոր պայրախտարութիւնը իր սինսիլէյէն ինծի ճիհէղ տուած են։

- Մարդ մը հարցուց տղու մը թէ ի՞նչ է անունդ։

- Ունիմ երեք անուն, պատասխանեց տղան, որոնց երկուքը առօրեայ, իսկ երրորդը պահեստի, և այս կրած անուններս իրենց գործածելու ալ մասնաւոր տեղերը ունին։

- Ինչպէ՞ս կարելի է մարդ մը երեք անուններ ունենայ որոնք գործածելու ալ մասնաւոր տեղերը ունենան։

- Այո՛, պատասխանեց տղան, որովհետեւ յորեկին չօրպաճիիս մաղազան ծո՛ Անտոն, եւ տանս մէջ Անտոն, սակայն դուրսը զանազան ընկերութեանց մէջ, միւսիւ Անթուան կը ճանչցուիմ։

ՄԱՎԻ

ԽԱՆԱՍՕՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Վաղը, կիրակի, Ալեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ, արարողութեանց աւարտումէն յետոյ տեղի պիտի ունենայ Հ. Ց. Դաշնակցութեան կողմէ պատրաստուած ազահանդէս մը, ի յիշատակ, տասը տարի առաջ, Խանասորի մէջ ինկած անձնուէր հերոսներուն։

Երգեր և արտասանութիւններ պիտի ըլլան և Տոքթ. Գըլըճեան ու Տ. Բարսեղ Շահպազ, որոնց հրապարակախօսի արժանիքը արդէն ծանօթ է, բանախօսութիւններ պիտի արտասանեն։

Կը յուսանք որ Ալեքսանդրիոյ հայութիւնը պիտի

փութայ խմբովին ներկայ գտնուելու այս հայրենասիրական հանդէսին։

Նմանապէս այս երեկոյ Գահիրէի մէջ դարձեալ Խանասօրի տասնամեակին առթիւ և տեղւոյն Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ սրահանդէս մը տեղի պիտի ունենայ, որուն մէջ հայրենասիրական երգեր պիտի երգուին և բանախօսութիւններ պիտի ըլլան։

Այս տեսակ հանդէսներ որոնք կը ծառայեն հայրենասիրական սրբազան հուրը վառ պահելու և երիտասարդ սիրտերու ազնիւ խանդը արծարծելու, արժանի են ամէն քաջալերանքի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Առ Վ. Թ. Գահիրէ.- Ստացանք ձեր ներբողալից նամակը թէ Ազատ Խօսքի և թէ Թերթիկի մասին։ Մեր չխնտող համեստութիւնը չափազանց վիրաւորած էք։ Շնորհակալութիւն ձեր ,,գրաւիչ‘‘ տողերուն համար։

Տ. Ե. Ա. աստ.- Ձեր հակաազատ խօսքեան գործունէութեան մասին, թէ՛ մասնաւորաբար ի Գահիրէ և թէ գաղտնաբար յԱլեքսանդրիա, կարգ մը տեղեկութիւններ կը հասնին հետըզհետէ։ Երջօրէն այս խնդիրը ձեռք առնելու համար կը սպասենք ուրիշ տօքիւմաններու. առ այժմ այսչափ։

Տ. Օ. Ջ. Գահիրէ.- Ձեր նամակը այս առատ առինք, թէև Թերթիկի ուղղուած. սակայն

կը ներէք եթէ Աղատ Խօսքի մէջ կը պատասխանենք։ Մեծ դոհութեամբ և շնորհակալութեամբ պիտի հրատարակենք ,,կրետականներու'' շարքը, եթէ հաճիք կարելի եղածին չափ շուտ հասցնել դանոնք։ Զբլլայ որ խոստացուած ուրիշ արձակ կամ ոտանաւոր յօդուածներու թըխիկին դայ այդ շարքն ալ։

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» ՁԵՌՔԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ Փաշա լրագրավաճառ Տ. Թելլալեանի խանութը։

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլտրն Քէօշքի քով և «Վուսաբեր» թերթի ցրուիչին մօտ։

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըրկին դինով։

New Victoria Hotel ՍԱՆ ՕԹԷՅԱՆՕ

ՆՈՐ ՎԻՔԹՈՌԻԱ ՕԹԷԼ Աղեքսանդրիոյ Մօտ

ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով։ Հիանալի ճաշասրահ, սալօն, ծխասրահ։ Մասնաւոր ճաշասրահ։ Ընդարձակ պատշգամ և պարտէզ։ Ելեքտրական լոյս։ ՁԱՓԱՒՈՐ ԳԻՆ։ Թելեֆօն թիւ 370։ Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ։ Թոամվայով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն։

Ս. Ֆ. ՌԷՋԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր դին կառավարական պաշտօնեաներու և զինուորականներու համար։ Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային։

ՇԻՐԱԿ

Ստայանք ՇԻՐԱԿ գրական եւ ընկերական ամսաթերթի երկրորդ շրջանի երկրորդ թիւր։

Իր բովանդակութիւնն է Հեղնար՝ Մ. Նաթանեանէ. Կիլիկեան Սուէտիա՝ Շ. Շիշմանեանէ. Հակահայ Փուրսիչ՝ Ա. Արփիարեանէ. Հայկական Օրոցքը եւ Արժիւներու Կարաւանը՝ Դ. Վարուժանէ. Անծանօթը՝ Ա. Արփիարեանէ. Ոսկի Ապրիլյան (Վէպ)՝ Ա. Արփիարեանէ. Արաբական կայսրութիւն մը՝ Արշ.ունէ. եւ Խմբագրական։

ՇԻՐԱԿի տարեկանն է 50 ղրշ. ոսկի։ Հասցէ՝ Խմբագրութեան Շիրակի, Պուլաթ Բօսթալ թիւ 37, Գահիրէ։

ՍԵՌ ԱՇԽԱՏԱՆՈՑ

ՕՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Դ. ՆԱԶԱՐԻԹԵԱՆ

ԶԱՅՏԱՆՈՒՆ

Գահիրէ 6. Հիւրախ Եւրոպ. Վարչութեան 6.6. 6.2.

15 RUE STAMBOUL 15

ALEXANDRIE

Այս ատելիերը մէջ կը գտնուին Գրքեր և նիւթեր գուսի Բլոքներ. Փաստաթուղթ. Գունաւոր Գիրքեր. արծաթէ և ոսկի մեդալներ. Քարտեզներ եւ. Զինկոգրաֆիի և Կոպիտոգրաֆիի Գրարներու գործեր։

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և տարբեր Գրերով. Հարանեկան հրաւիրագիրներ. այցագրարներ. Նամակագրութիւններ. տարեցոյցներ. հաշիւներ. մանագիրներ. Նպարներ Գրիչներ. գրիչներ եւն.

Մասնաւոր իրաւունք ունինք և մարդիկնան. Աստիճանաւոր գին։

Այս ատելիերոցը չեր մոռանար կը յանձնարարեր Ալեքսանդրիոյ. Գահիրէի և բոլոր Եգիպտոսի ազգայնոց. փասանելիերով թէ ունենալ բոլոր յանձնարարութիւնները ամենանոր իրաւունքով կը կատարուին և. գոհ կը ձգեն ամէնն գոհացուցիչ հաստատներ։

Մեծար գործատուներու դիմելի եւ. Հանդիպ անկամ մը ատելիոյ ազգ ատելիատերոր

ԹԵՐԹԻԿ

Սոյն օրաթերթը կանոնաւորապէս կը հրատարակուի ամէն առաւօտ և կը պարունակէ ամէն ընթերցողի մատչելի լուրեր ընթացիկ կեանքի մասին ինչպէս նաև հետաքրքրաշարժ թերթօն մը։ Բաժնեգինն է Եգիպտոսի մէջ, Աղեքսանդրիա, վեցամսեայ՝ 60 ղ. ո. ամսական՝ 10 ղ. ո. Գահիրէ, վեցամսեայ՝ 60, ամսկն.՝ 12։ Արտասահմն. վեցամս. 80։

"ԱԶԱՏ ԽՕՍՔ"ի Պայմանները

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Եգիպտոսի համար բաժնեգինն է

40	ԹԻՒԸ	40	ՂՐՇ.	ՈՂՋ
20	"	20	"	"

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40	ԹԻՒ	10	ՖՐԱՆՔ
ՌՈՒՍԻ	"	"	4	ՌՈՒԲԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	"	"	2	ՏՈԼԱՐ

Բաժանորդագրութիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐՇ. ՈՂՋ

"ԱԶԱՏ ԽՕՍՔ"ի համար բաժնեգին կամ որ և է գրութիւն պէտք է ուղղել հետևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Ծանուցումներ կընդունուին մասնաւոր պայմաններով։

Պատասխանատու - Խմբագիր **Ե. ՕՏԵԱՆ**

Տպգր. Փորգր. Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա